

ծնողացն առ Աստուած փոխեցելոց. հօրն՝ Սարգսին և մօրն՝ Ուլու խաթունին, և իր կողակցուն՝ Սուլթանին, և ամենայն արեան մերձաւորաց. նա և կենդանի զաւակացն, Պր. Պոկտանին, Կուլաֆին և Տովլաթին, և քրոջ Բերօզային և Ճաշիկին, և Կուլաֆին, Աննային, ևն. զոր Տէր Աստուած ընդ երկայն աւուրս պահեսցէ. ամէն: Արդ ստացաւ զլուսաբուխ զսուրբ աւետարանս, ի թվ. ՌԻԷ, փետր. 20: Արդ սրտի մտօք յիշեցէք ի մաքուր աղօթս ձեր զՊր. Տօնաւագ. և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ. ամէն:

1590.

Շնորհիւ Տեառն սկսաք և ողորմութեամբ նորին կատարեցաւ քնարս աստուածահօրն Դաւթի՝ ի յաշխարհս իւրիաց, ի քաղաքս Լով, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնի, թվին ՌԻԶ (1568), յունվար ամսուն աւարտեցաւ, ի լաւ և յընտիր օրինակէ. ձեռամբ թերաւարժ գրչի Տիւերկրցոյ, զոր աւուսամբ չեմ յիշելոյ. երես անկեալ կ'աղաչեմ զաղափարողացդ, որ մեղադիր չլինիք գրիս, ծերացեալ ալեօք գրեցի վաթսնամեայ գոլով. զգայարանքս ի յուժոյ թափեալ է. եւս առաւել մագաղաթս կոկ չէր, խիստ դժարանօք գրեցի: Բայց գրեցաւ սա ի թագաւորութեան այսմ աշխարհիս գրուլ Ժիկմոնդ Ակուստոսին, և ի կաթողիկոսութեան Ս. Էջմիածնի Տէր Ստեփանոս Աւընճեցոյ, և ի յեպիսկոպոսութեան այս նահանգիս Գրիգոր վարդապետի Վանեցոյ: ԶՏիւերկրցի ձարուտողս անպարսաւ թողուք յընթեռնուն ձեր: — Վերստին ստացողս հոգիաշունչ սուրբ տառիս իւրօցի զՊր. Աւագէյն յիշեալիք ի մաքրափայլ աղօթս ձեր, և զհանգուցեալ զծնողսն իւր՝ զՊր. Աւգսենդ և զմայրն զՇուշան, և զամենայն արեան մերձաւորսն, որ ստացաւ զսա հալալ արդեանց իւրոց, և ետ զսա յիշատակ Զամոսցայի եկեղեցոյն Նշման Ս. Աստուածածնին, ի վայելուժն մանկանց սուրբ եկեղեցոյ. ի թագաւորութեան Գ. Զիկմոնդին, և ի իշխանութեան քաջ զօրավարին և աստուածասէր իշխանին և քաղաքիս հիմնարկողիս Պր. Քանձլէրին, որ անուամբ կոչի Բան Եան: Ի թվ. ՌԻԸ և մայիս ամսոյն 17: [Սաղմոս ի կայսեր. գրատան վիճեալ]:

1592.

Ի ՌԻԱ Թվականիս Հայոց Մեծաց, ի հայրապետութեան Ս. Էջմիածնի Տէր Դաւթի կաթողիկոսին, և ի թագաւորութեան այսմ նահանգիս բարեպաշտ արքային Երրորդումն Զիկմոնդին Լեհաց իշխանաց իշխանին, Պր. Թորոս Պեռնաթենց որդի Պր. Զատիկին՝ առ Աստուած փոխեցելոյն, եւացեալ աստուածային սիրով մեծաւ փափագանօք, տեսեալ զսուրբ կենսաբուխ սուրբ Աւետարանս հնացեալ և անխնամ ի պահողացս, վերստին նորոգել երեստ մեծաւ ծախիւք և արծաթապատ զարդարանօք, ի փառս Միածնի որդւոյն Աստուծոյ, և ի վայելուժն մանկանց նոր Սիոնի. յիշատակ իւր և համեստ կողակցուն իւրոյ Մարիանէին և մօրն Աննային, և ի Քրիստոս հան-